Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարան

«ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԸ՝ ԳՐՔԻ ՀԱՆԳՐՎԱՆ»
Գիտաժողով՝ նվիրված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի հիմնադրման 10-ամյակին

Հոդվածին ներկայացվող տեխնիկական պահանջներն են՝

1. ***Ընդունման նախապայմանները*** - Հոդվածների նախնական ընդունման պայմաններն են՝
   ա) համապատասխանությունը ժողովածուի ձեւաչափին (թեմա, ոճ, գիտական համակարգ),
   բ) ինքնությունը (այլ տեղ հրատարակված չլինելը),
   գ) որոշակի նորույթ բովանդակելը,
   դ) մեթոդապես հիմնավորված լինելը,
   ե) հստակ կառուցվածքը (հնարավորինս ենթաբաժանումներով),
   զ) համապատասխանությունը ստորեւ բերված տեխնիկական պահանջներին:
2. ***Ներկայացման ձեւը*** - Էլեկտրոնային հասցեով (տեքստը՝ Word ծրագրով, նկարը՝ բարձրորակ TIFF կամ JPEG ձեւաչափով): Տեքստում տողադարձ չօգտագործել: Առաջին էջի վերին աջ անկյունում գրել հեղինակի անունը, ազգանունը, կոչումը, աշխատավայրը, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը:
3. ***Տառատեսակը*** - Sylfaen (հիմնական տեքստի տառաչափը՝ 12, տողատակն ու ամփոփումը՝ 10 մեծությամբ):
4. ***Չափսը*** - A4 թղթի սահմանագիծը բոլոր կողմերից՝ 2 սմ, տողերի միջակայքը՝ 1.15, ծավալը՝ 8-10 էջ:
5. ***Բանալի բառեր***՝ նշել հոդվածի բուն շարադրանքից առաջ /5-7բառ/:
6. ***Նկարները*** - Գծանկարները, սեւ-սպիտակ եւ գունավոր լուսանկարները ներկայացնել հոդվածից առանձին՝ որպես հաջորդական միավորներ (նկ./աղ. 1, 2, 3…)՝ ոչ պակաս քան՝ 600 DPI խտությամբ: Նկարներին կցել «*Նկարների ցանկ*»՝ յուրաքանչյուրի բացատրությամբ եւ նկարի աղբյուրի հղմամբ: Նկարների տպագրությունը լինելու է սև-սպիտակ:
7. ***Հղումները*** - Տողատակ՝ անվան սկզբնատառ և ազգանուն (թավ)-վերնագիր-հրատարակման տեղ-թիվ-էջ հաջորդականությամբ (նույնն է բոլոր լեզուների համար): Սկզբնաղբյուրի, մամուլի եւ արխիվի հղման դեպքում աշխատել պահպանել ընդունված սկզբունքները: Համացանցային հղումների դեպքում, եթե ունեն՝ հեղինակ, վերնագիր, թվական, պաշտոնական կայք, պարտադիր նշել կայքից օգտվելու թվականը: Հղումների համարակալումը՝ հաջորդական (1, 2, 3…) ամբողջ հոդվածի համար: Մի քանի միավորները մեկ հղման մեջ տարանջատել միջակետով: Հղման կրկնման դեպքում օգտագործել «Նշվ. աշխ.»:
8. ***Ծանոթագրությունները*** - Տողատակ՝ հղումների սկզբունքով: Պատմական բնագրերի ծանոթագրությունները՝ տեքստի վերջում, տարընթերցումները՝ տողատակում: Խնդրվում է հնարավորին խուսափել ծավալուն ծանոթագրություններից:
9. ***Ամփոփումները*** - Անգլերեն եւ ռուսերեն, ծավալը՝ 80-100 բառ: